ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

02/07/2025թ.

Աժ աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար

Դավիթ Առաքելյանին

Հարգելի պարոն Առաքելյան,

2025 թվականի հուլիսի 1-ին գումարված Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի օրակարգի 3-րդ կետում ներառվել և առաջին ընթերցմամբ ընդունվել է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում լրացում կատարելու մասին և «Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին նախագծերի փաթեթը:

Հաշվի առնելով այն, որ վերոնշյալ նախագծերի փաթեթը խիստ թերի է և հակասում է ՀՀ Սահմանադրությանը և միջազգային մի շարք իրավանորմերին, ինչպես նաև այն հանգամանքը, որ այն ընդունվելու դեպքում ՀՀ-ի համար ձևավորվում են ֆինանսական և ներդրումային անհաղթահարելի ռիսկեր, «Հայաստան» խմբակցությունը առաջարկում է նախագծերի փաթեթը հանել շրջանառությունից:

«Հայաստան» խմբակցության քարտուղար՝ Արծվիկ Մինասյան